ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42-Ն

13 նոյեմբերի 2015թվական գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 45-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Անուշավանի պահուստային ֆոնդ՝ 4891 հոդված 768 600 /յոթ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր / թվերը և բառերը փոխարինել 0 /զրո/ թվով և բառով:
2. Անուշավանի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում՝ 4111 հոդված 15 063 000 /տասնհինգ միլիոն վաթսուներեք հազար/ թվերը և բառերը փոխարինել 15 631 600 /տասնհինգ միլիոն վեց հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր/ թվերով և բառերով,
3. Անուշավանի բարձրագույն կրթություն՝ 4729 հոդված 400 000 /չորս հարյուր հազար/ թվերը և բառերը փոխարինել 600 000 /վեց հարյուր հազար/ թվերով և բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-5 Դեմ-0

Ռ. Հարությունյան կողմ
Ղ. Ղահրամանյան կողմ
Գ. Վարդանյան կողմ
Ա. Կարոյան կողմ
Մ. Մովսիսյան կողմ

Անուշավան համայնքի ղեկավար Ե. Հակոբյան

13 Նոյեմբերի 2015թվական
գ. Անուշավան